

ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ԿԱՐՈՅՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Պարսկերեն-հայերեն բառարանագրութիւնը ներկայանում է պատկանելի թվով հուշարձաններով, որոնք ինչպես լեզվի, այնպես էլ ընդհանուր միջնադարյան մատենագրութեան պատմութեան համար որոշակի գիտական հետաքրքրութիւն են ներկայացնում: Դրանց թվում կան բառարանագրական առումով մեծարժեք մի քանի գործեր, ինչպիսիք են Գեորգ Դպիր Պալատացու «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» խորագիրը կրող բառարանը¹, նույն հեղինակի երկու ձեռագիր օրինակներով մեզ հասած 1795 և 1823 թթ. բառարանները², եռալեզու՝ պարսկերեն-արաբերեն-հայերեն հանգաբանական բառարանը³ և այլ բառարաններ, որոնք աչքի են ընկնում բառային կազմի հարստութեամբ և բառարանագրական տեխնիկայի բարձր մակարդակով: Սրանց մեջ առանձնանում է Գեորգ Դպիր «Բառարան պարսկերէն»-ը, որը վստահորեն կարող է դասվիլ հայ բառարանագրական կարևոր հուշարձանների շարքում և որն իր կատարելութեամբ մոտենում է Հայկազյան բառարանների (Հին և Նոր) մակարդակին: Այդ բառարանի արժանիքներին տարբեր առիթներով անդրադարձել են սովետահայ մի քանի հայագետներ և իրանագետներ⁴: Սակայն վստահորեն կարելի է ասել, որ այն իր հարուստ բովանդակութեամբ կարող է հիմք հանդիսանալ ավելի համակողմանի ուսումնասիրութիւնների, հատկապես բառագիտական և բառարանագրական տեխնիկայի վերլուծութեան առումով, ինչպես նաև մշակութաբանական հարցերի մեկնաբանման տեսակետից՝ նկատի ունենալով, որ այն ներունակ (իմպլիցիտ) ձևով պարունակում է հարուստ նյութ հայ-պարսկական մշակութային առնչութիւնների վերաբերյալ: Պարսկերեն-հայերեն բառարանագրութիւնը ներկայացված է նաև մի ամբողջ շարք ձեռագրական փոքր հուշարձաններով, որոնք տարբեր բնույթի են և բառարանագրութեան տեսակետից համարժեք չլինելով հանդերձ, բառարանագրութեան պատմութեան համար ունեն որոշակի արժեք:

Բառարանագրական փոքր հուշարձաններ անվան տակ մենք միավորում ենք բուն իմաստով փոքրածավալ երկրիզվյան բառարանները, բառատետրերը և բառացանկ բառարանները: Ստորև կփորձենք բնութագրել այդպիսի յոթ պարսկերեն-հայերեն բառարաններ, որոնք ըստ բնույթի հետևյալ կերպ կարելի է դասակարգել. 1) առանձին գրական երկասիրութիւնների լեզվին նվիրված բառարաններ, 2) առարկայական առանձին բնագավառների (նեղ մասնագիտական) բառարաններ, 3) առձեռն խոսակցական բառարաններ:

Պարսկերեն-հայերեն բառարանագրութեան ակունքները զտնվում են վաղ միջնադարում: Առաջին պարսկերեն-հայերեն բառարանը, ինչպես ճիշտ

1 Գ է ո Ր գ զ պ ի Ր Տ է Ր-Ց ի վ հ ա ն ն ե ս ե ա ն Պ ա լ ա տ ա ջ ի, Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, Կոստանդնուպօլիս, 1826 թ.:

2 Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռագիր № 10301 և 9609:

3 Մատենադարան, ձեռագիր № 9628:

4 Այս մասին տե՛ս Բ. Լ. Զ ա լ ա զ յ ա ն, Հայ-իրանական գրական առնչութիւններ, Երևան, 1963, Գ. Գ ա ս պ ա Ր յ ա ն, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երևան, 1963:

ելատված է, կարելի է համարել «Բառք Վարդան գրոց» բառանցանկը⁵, որից մշտոցի անվան մատենագրարանում առկա են XIV—XVIII դդ. շուրջ հիսուն ընդօրինակություններ: Ընագույնը № 4149-ի տակ գրանցված 1304 թ. ձեռագիրն է: Փարիզի ազգային գրադարանի № 302 համարի տակ գրանցված ձեռագրում կա ավելի վաղ մի ընդօրինակություն (1282 թ.)⁶, որը նույնպես նախադադափար օրինակ չի համարվում⁷: Բառարանը շնչին տարընթերցվածքներով, «Բարգամանութիւն պարսից բառի ի Վարդան գրոց», «Մեկնութիւն պարսից բառի ի Վարդան գրոց» և «Բառք Վարդան գրոց» վերնագրերով գտնուում ենք ընդօրինակված այլ կարգի նման բառարաններ և քերականական լեզվագրեր պարունակող ժողովածուներում: Պարզ է, որ այն ունեցել է գործնական նշանակություն: Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» կրկի բնագրից դուրս են բերված պարսկերեն բառերը և կից տրված են հայերեն բացատրություններ: Բառացանկը, անշուշտ, կազմվել է ավելի ուշ⁸, երբ Եղիշեի «Պատմության» XI—XII դդ. մի ընդօրինակությանն առնթեր անհայտ հեղինակի կողմից տրվել են այդ բառերի բացատրությունները: Այս բառարանի ստեղծման պայմանների և շարժառիթների վերաբերյալ որոշակի հիմքեր կան առաջադրելու այն վարկածը, որ Եղիշեի «Վարդանանց պատմության» մեջ գործածված պարսկերեն բառերը ժամանակին, հայ-պարսկական սերտ առնչությունների շրջանում, հասկանալի են եղել հայ ընթերցողին, իսկ մասամբ էլ՝ գործածական հայերենում: Այնուհետև, ժամանակի բացառությամբ, պատմական հանգամանքների բերումով և լեզվի զարգացման ներքին օրինաչափությամբ, մեր լեզվում օգտագործվող այդ պարսկերեն բառերը հետզհետե դուրս գալով գործածությունից, դադարում են հասկանալի լինելուց: Ուստի և ժամանակի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել բացատրելու Եղիշեի բնագրում առկա հայոց լեզվին խորթացած որոշ պարսկերեն բառեր՝ տվյալ երկը լրիվ հասկանալի դարձնելու համար: Եվ բնական է, որ բառացանկում բացի պարսկերեն սովորական փոխառյալ բառերից տեղ են գտել զրադաշտական կրոնին վերաբերող հասկացություններ և նույնիսկ հատուկ անուններ, որոնք ավելի ուշ ժամանակներում արդեն, երբ զրադաշտականությունը պատմության գիրկն էր անցել, անհասկանալի կարող էին լինել հայ ընթերցողին: Այս առումով հետաքրքրական է ևս մեկ լրացուցիչ փաստ: Հեղինակի վկայությամբ, բառացանկը կազմելիս հարկ է եղել խորհրդակցել ազգությամբ պարսիկ մի անձնավորության հետ: Բառացանկի վերջում նշված է. «Ջառաջին ճառն ընթերցեալ գտի երիս բառս, զոր պարթևն ոչ գիտաց ասելով չէ պարսիկ և այլն այս է բովանդակ»: Մեկ ուրիշ վկայության մեջ նշված է, որ նույնպիսի կասկած է ծագել ռքունայն բառի պարսկերեն լինելու վերաբերյալ, և հեղինակը միանշանակ ձևով ասում է. «բայց յայտ է ի նախատես բանից մոգպետին զի պսակն է»: Նշված փաստերն ինքնին վկայում են «Վարդան գրոց»-ի սկզբնական շարադրման ժամանակ նրա գործնական անհրաժեշտության մասին: Այս բառացանկի ընդօրինակությունները տարբերվում են բառային կազմով: Փոքրածավալ ընդօրինակությունները պարունակում են 25—30 բառ, իսկ ընդարձակները՝ 36—40 բառ: Բառացանկում բացատրված են պարսկերենի բառապաշարի 3 կարգի բառախմբեր՝ սովորական, առօրեական բառեր յաշտ առնէր—եհգարծէր կամ ստեղծագարծէր, լակիշ—համագունդ, նախնիր—ոմիր կամ առեան ցապախիք, վզուկ—մեծ, զրադաշտական կրոնին վերաբերող՝ պաշտամունքային հասկացություններ արտահայտող բառեր, կրոնական սպասավորների անվանումներ՝ դնեմագդե—հալառայ հալառ, կեշտն—

⁵ Հ. Ա մ ա լ յ ա ն, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V—XV դդ.), Երևան, 1966, էջ 103:

⁶ Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, par Frédéric Macler, Paris, 1908, p. 155.

⁷ Գ ա ո պ ա Ր յ ա ն, «Վարդանանց պատմության» միջնադարյան բառարանը, («Պատմա-բանասիրական հանդես», 1963 № 2, էջ 270):

⁸ Գ ա ո պ ա Ր յ ա ն, նշվ. հոդվ., էջ 269:

կրօնք, զանցիմ-սպասուստր, զրուան-կրօնոս կամ արամազդա, մեկնաբան-ված և բացատրված են նաև հատուկ անոաներ: Միայն XVII դարի երկու զբր-չագրերում է, որ բառացանկի զխաբառերը դասավորված են հայոց այբու-բնի հերթականությամբ: Մյուս բոլոր ընդօրինակություններում բառերը դասավորված են ոչ թե այբբենական կարգով, այլ Նդիշեի «Պատմություն» բնա-չրում հանդիպող հաջորդականությամբ: Պարզ է, որ նախագաղափար օրի-նակի բառացանկը պետք է կազմված լիներ վերջին սկզբունքով և միայն հե-տագայում է այն այբբենական վերագասավորման ենթարկվել, այսինքն՝ վե-րածվել բնագրին առնթեր բուն իմաստով պարսկերեն-հայերեն բառարանի: Սա, իհարկե, չի նշանակում, թե կարելի է հետագա ընդօրինակությունները ժամանակագրական կարգով դասավորել՝ ենկելով բառերի դասավորության այբբենական կամ ոչ այբբենական սկզբունքից, քանի որ այդ ընդօրինակու-թյունները կատարվել են նշված երկու բնօրինակներից, միմյանցից անկախ, և հաճախ ընտրությունը եղել է պատահական, ըստ ձեռքի տակ եղած օրի-նակի:

Բառարանագրական տեխնիկայի առումով այս բառացանկերի համար ընտրող են յուրաքանչյուր զխաբառի նոր տողից սկսվելն ու համարյա բոլոր բառերի համարժեքներին զուգահեռ համապատասխան համանիշների թվար-կումը: Այսպես օրինակ՝ շխաբակ-վտարանդի, տարաշխարհիկ կամ անդրե-վատոյց, ղակիշ-համազունդ կամ միաժողով, մարզե-հասրե կամ հարկե:

Առանձին բնագրերի օտար և անհասկանալի բառերի կամ հատուկ անոան-ների բացատրություններից կազմված բառացանկերի մեջ թերևս ավելի հայտ-նի են կրոնական երկերում, հատկապես Հին և Նոր կտակարաններում հան-դիպող բառերի մեկնություններ պարունակող բառարանները, ինչպիսին է, օրինակ, «Բառք եբրայեցուց» խորագրով հայտնի, X—XI դդ. կազմված բա-ռարանը: Եթե մինչև XVII դարը այս բառարանը իր տեսակի մեջ միակն էր հայ մատենագրության մեջ, ապա XVII դարի կեսից կազմվում են աստվա-ծաշնչային բառերի մեկնություններով նոր տեսակի մի շարք բացատրական բառարաններ՝ բառացանկի այբբենական կամ խառը դասավորությամբ⁹: Այս առումով առավել ուշադրության է արժանի Մաշտոցի անվան Մատենա-դարանի № 10572 ձեռագրում պահպանված համառոտ բառարանը, որը պարունակում է աստվածաշնչային առանձին բառերի մեկնություններ, սակայն մի տարբերությամբ. եթե նախորդ բառարանները եղել են հայերեն բացատ-րական բառարաններ, ապա մեզ հետաքրքրող բառարանը երկլեզվյան՝ պարս-կերեն-հայերեն, մի փոքր բառացանկ է, այսինքն՝ թարգմանական տիպի բա-ռարան: Ինչդրո առկա հեռագրի ձեռագրի գրիչ Քավրիզցի Սափարի որդի Խաչիկը կազմել է մի բազմաբնույթ ժողովածու, որի սկզբի մասում (էջ 11ա) տեղ են գտել նաև «Հայր մեր-ի» ինչպես նաև «Հավատամքի» որոշ հատվածների պարսկերեն, թուրքերեն, արաբերեն և ասորերեն հայատառ թարգմանություն-ները: Պարսկերեն թարգմանություններին կցված է պարսկերեն-հայերեն մի բառացանկ, որն ընդգրկում է, մի շարք կրոնական տերմիններ, հասկացու-թյուններ և աստծու անվան տարբեր էպիտետներ, որոնք մասամբ արտահայտ-ված են վերը նշված պարսկերեն թարգմանություններում: Ինչպես օրինակ՝ ալահ-աստված, վալատ-որդի, յիսե-բիստոս, ուն ալլահ-հոգի Աստուած, յիսե նուրի նուրդան-բիստոս, Քարամաբեար յիսայ-սփանչլագոթ: Բառա-րանագրական տեխնիկայի տեսակետից այս բառացանկի արժեքը մեծ չէ. զխաբառերը տող առ տող առանձնացված չեն, բառերն ու բառակապակցու-թյունները չեն բաժանված: Սրանով հանդերձ XVII դարի բառարանագրու-

⁹ Մատենադարան, ձեռագիր № 266, 516, 530, 537, 2261, 4149, 4283, 4398, 4612, 6046, 7012, 7250, 8106, 8198, 8606, 10161, 10223 և այլն: Հմմտ. Հ. Ամալյան, *Եզ. աշխ.*, էջ 143, նույնի՝ Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI—XVIII դդ.), Երևան, 1971, էջ 66:

թյան այս նմուշը կարելի է բարձր գնահատել՝ հաշվի առնելով նաև նրա գործնական նշանակությունը:

Առարկայական առանձին բնագավառի վերաբերող բառարաններից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում XVI դարի տաղերգու Հովասափ Սեբաստացու կազմած մուլորակների անունների պարսկերեն-հայերեն բառացանկը: Խոսելով Հովասափ Սեբաստացու մատենագրական ժառանգության մասին, տաղերի հրատարակիչ Վ. Գևորգյանը նրան բնորոշում է որպես իր ժամանակի զարգացած մտավորականներից մեկը, որը չափածո ստեղծագործություններից՝ տաղերից բացի, ունի նաև վարքագրական-վկայագրական գործեր, գրչական և նկարչական վաստակ, կատարել է թարգմանություններ և հավաքել ու մշակել է պատմաժամանակագրական նյութեր¹⁰: Նրա գրչին են պատկանում բազմաթույլ բովանդակությամբ մի շարք չափածո գործեր՝ սիրո երգեր, պատմական բանաստեղծություններ և պոեմներ, բարոյա-խրատական բանաստեղծություններ, ինչպես նաև տոմարական ոտանավորներ: Սակայն նրա հեղինակած գործերի և ընդօրինակած ձեռագրերի մի մասը մեղ չի հասել: Մեզ հասած գրական ժառանգության քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նա ծանոթ է եղել և օգտվել է հայ հին մատենագրությունից, քնարերգության ասպարեզում յուրացրել է նրա սկզբունքները և շարունակել ավանդույթները՝ նոր աստիճանի բարձրացնելով հայ բանաստեղծությունը: Հովասափ Սեբաստացու տոմարագիտական գիտելիքներն էլ իրենց արտահայտությունն են գտել նրա փոքրաթիվ, բայց արժեքավոր տոմարական չափածո ստեղծագործություններում: Իրանք թվով հինգ ոտանավորներ են, որոնք լրացնում ու հարստացնում են բանաստեղծի գրական ժառանգությունը: Ոտանավորները, հավանաբար, գրված են ուսուցողական նպատակով՝ կրթական հաստատությունների համար: Բանաստեղծություններից մեկում՝ «Վասն եօթ մուլորական աստեղացն և բնութեան և անանցն՝ շորս ազգի լեզուս ոտանաւոր», խոսվում է անզին աչքով տեսանելի հինգ մուլորակների, լուսնի ու արեգակի մասին՝ տալով նրանց անվանումները շորս լեզուներով՝ հայերեն, «տաճկերեն» (պարսկերեն, արաբերեն), «ֆուսանկերեն» (լատիներեն) և հունարեն, ինչպես նաև նկարագրվում է նրանց տեսանելի ընթացքը կենդանաշրջանում: Այս բանաստեղծության մեջ դրսևորվում են Հովասափ Սեբաստացու ոչ միայն տոմարական գիտելիքները, այլև լեզվաիմացությունը: Այս ոտանավորներից երևում է, որ նա տեղյակ է եղել երկնային մարմինների անուններին շորս լեզուներով, դրանց թվում՝ նաև պարսկերեն: Դա է հաստատում նաև նրա ինքնագիրը համարվող ձեռագրի մի փոքր հատվածը: Այն արդեն բառարանի բնույթ ունի և վերնագրված է «Բ պարսկի լեզունն ի (հ) այս անունը մուլորականացն»¹¹: Այսինքն՝ կարելի է վստահորեն ասել, որ Հովասափ Սեբաստացին կազմել է իր ժամանակ հայտնի մուլորակների անունների պարսկերեն-հայերեն բառացանկ: Սա նույնպես գրված է չափածո՝ ուսուցողական նպատակով: Բառարանագրական տեխնիկայի առումով այդ բառացանկը նորություն չի բերում. մուլորակների պարսկերեն անվանումները՝ գլխաբաները, հայատառ են, դասավորված են խառը՝ ոչ այբբենական կարգով. «Արդ գաւուալ աստղն է երեւակ, և մուշթարիե լուսեթագ. մառեխն երբատե. շամս արեգակն. միայն անուամբ փայլագունակ. զօհրա ասէն լուսաբերիե և ւտարիա փայլածուիե. դամբար կոչեն զանուն լուսնին. միայն անուամբ զանագանին»¹²:

Նեղ մասնագիտական բառարանների շարքը կարելի է դասել Մատենադարանի № 372 ձեռագրում (էջ 144ա—165ա) գետեղված «Բառագիրք պարսից» խորագրով եռալեզու բառարանը, որի նյութը բժշկական տերմիններն են՝ թարգմանված արաբերեն և հայերեն: Սա մի մեծածավալ և արժեքավոր

10 Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ (աշխատասիրությամբ Վ. Գ. Գևորգյանի), Երևան, 1964, էջ 7:

11 Տե՛ս Մատենադարանի միկրոթայվեհների ֆոնդ, № 352:

12 Նույն տեղում:

ձեռագիր է, որն ընդգրկում է Ամիրդովլաթ Ամատսիացու Լրէրորդ Ախրապատինի խմբագրութիւնը, բժշկական շափ ու կշիռն ու վերոհիշյալ բառարանը: Այս բժշկարանը գրված է բժիշկ Ղուլ-Հովհաննեսի կողմից, Հնդկաստանի Սուրաթ քաղաքում 1758 թ.: Ինչպես պարզվում է ձեռագրից, բժշկարանը հետագայում պատկանել է նախնի Ա. Չորագեղցի կաթողիկոսին (1809—1830 թթ.) սորպես հեքիմարան»¹³: Այս բառարանի բառացանկն ուշագրավ է նրանով, որ այն չի կրկնում Ամիրդովլաթի «Անգիտաց անպետ»-ի բառաշարքի դասավորութիւնը, մի երևույթ, որ շատ հաճախ է հանդիպում այդ շրջանի բժշկական բառարաններում: Սա բժիշկ Ղուլ-Հովհաննեսի գրչին պատկանող, ինքնատիպ սկզբունքներով ընտրված բառացանկ է: Այս բառարանը պատկանում է բժշկարանների ոչ ամիրդովլաթյան խմբին: Այս հանգամանքը խիստ մեծացնում է տվյալ բառարանի արժեքը: Իսկ ի՞նչ սկզբունքներով է կազմված բառարանը: Գլխաբառը պարսկերենն է, անուհետև տրվում է նրա արաբական համարժեքը, ապա հետևում է հայերեն թարգմանութիւնը (բոլորը հայտատ): Բառարանում կիրառված է բառաշարքի այբբենական դասավորութիւն՝ Ա-ից մինչև Ֆ, սակայն բառաշարքի յուրաքանչյուր տառի տակ կրթման նկատվում է բառերի դասավորութիւն սրող անհետևողականութիւն. բառերը ըստ երկրորդ կամ երրորդ տառի միշտ չէ, որ իրենց համապատասխան տեղում են դրված, ինչպես օրինակ՝ դօղան, հետո դօմբ: Թարգմանութիւնները մեծ մասամբ միաբառ են. բշէմ-բուրդ, քոխմի մուրդ-նալկիթ: Ընդ որում գլխաբառի յուրաքանչյուր բառ չէ, որի հայերեն համարժեքը իսկապես հայերեն բառ է: Շատ հայերեն բառերի թարգմանութիւնը չէ, որ տրվում է, այլ պահպանվում է պարսկերեն կամ արաբերեն բառը՝ աֆտիմոն-աֆտիմոն-աֆտիմոն, ագարի թուրքի-վաջ-վաջ, բեխի նիլուֆար-ըոխչայի նիլուֆար: Դա ոչ միայն բխում է այն փաստից, որ հայկական բնաշխարհում չի եղել տվյալ խոտաբույսը կամ ծաղիկը և համապատասխանաբար հայերենում չի եղել նրա հայերեն անվանումը, այլև այն հանգամանքից, որ այս շրջանի հայկական բժշկական տերմինաբանութիւնը զգալիորեն կրում էր արաբական բժշկութիւնի ազդեցութիւնը: Որոշ պարսկերեն բառերի դիմաց կա միայն արաբական համարժեքը, իսկ հայերենի տեղը բաց է թողնված: Ըստ երևույթի, հեղինակը չի իմացել դրանց ճշգրիտ հայերեն անվանումները և բուցն մտադիր է եղել դրանք հետագայում պարզել ու լրացնել՝ մտցնելով բառացանկի մեջ: Բառարանում տեղ գտած դեղանուններն ըստ իմաստի բազմազան են: Կրանք նշանակում են թե՛ օրգանական և թե՛ անօրգանական ծագում ունեցող նյութեր՝ բուսական դեղանյութեր՝ խոտեր (գավգրան-եգան լեզու), ծառեր (դրախտի շինար-ծառ շինարի), ծաղիկներ (գօլի բնար-ծաղիկ նուան), բանջարեղեն (քրայէր ասաֆե-խուրասանի բակլայ), մրգեր (գարդալու-ծիրան), բույսերի արմատներ (ագէր գրայ-քարխուեի fof), տերևներ (բարկի սուէն-տերև սուսանի), սերմեր (թօխմի դալդամ-շախկամի սերմն), հատիկներ (գանդոմ-ցորեն), բուսական խեղդեր, ձեթեր (ռուլանի բալասան-բալասանի ձեթ) և այլն: Կենդանական ծագում ունեցող դեղանյութերի առնչությամբ հիշատակվում են այնպիսի տերմիններ, որոնք նշանակում են ընտանի և վայրի կենդանիներ (խառզուղ սարայի-վերի ալայպատակ, էւաբայ-աղվես), թռչուններ (զոն-ջիշկ-ծիտ նեհուխ), միջատներ (մոջան-մոջամ), սողուններ (մար-օղ) և նրանց զանազան օրգաններ (շուշի խուկ-թոֆ խոզի, ջիգարի մոզայ-խալֆոյ լերդն), ինչպես նաև կաթ (շիր գուսպանդ-ոչխարի կաթն), միս (գուշտի գավմիս կօլի), յուղ (փի մայի-ձկան նուազու) և այլն: Հանդիպում են նաև Շրուտիչ քարերի» անվանումներ (ալմաս-ալմաս, բիրուզայ սանկ-փիրուզայ):

Բառացանկում հանդիպում են հոմանիշներ՝ տեղադրված այբբենական կարգով, ահմապատասխան բառահոլվածներում: Օրինակ՝ ասպայուզ-ղաոնիարուխ (էջ 144բ) և բանզու-ղաոնիարուխ (էջ 146ա): Այս բժշկական բառարանը պարունակում է 1358 գլխաբառ: Բժշկարանն իր կառուցվածքով, բառարանագրական տեխնիկայի սկզբունքներով, բառաշարքի ու բառակազմի

13 Ձևագիր № 372, էջ Ա:

առանձնահատկություններով նմանվում է Քրառք բժշկականք (բառգիրք երեք լեզուեան՝ պարսկերեն-արաբերեն-հայերեն)» խորագիրքը կրող XVII դարի մի այլ բժշկարանի¹⁴, որի ձեռագիրքը խիստ քայքայված է, բոլոր էջերն առանձնացած են, մի մասը՝ անընթեռնելի: Այդ պատճառով հնարավոր չէ որոշակիորեն ասել, թե արդյոք առաջին ձեռագիրքը (1758 թ.) երկրորդի (XVII դ.) էջգրիտ ընդօրինակությունն է, թե խմբագրությունը: Այս բառարանի կառուցվածքը համընկնում է նախորդի հետ: Էջը բաժանված է երեք մասի: Առաջին սյունակում տեղադրված են պարսկերեն բառերը, երկրորդում՝ արաբերեն, իսկ երրորդ սյունակում տրված է նրանց հայերեն թարգմանությունը՝ մեծ մասամբ միաբառ: Պարսկերեն և արաբերեն բառերը հայատառ են: Բաները սյունակներում դասավորված են ըստ պարսկերեն բառերի սկզբնատառերի՝ այբբենական կարգով: Այս բժշկական բառարանը նույնպես պատկանում է բժշկաբանների ոչ ամիրդոլյաթյան խմբին, քանի որ սրա բառակազմը ևս տարբերվում է Ամիրդոլյաթի բառարանի բառաշարքից: Որքան կարելի է դատել ըստ բառարանի պահպանված էջերի, այն բավականին մեծածավալ աշխատանք է: Բառգիրքն ընդգրկում է բժշկության մեջ տարբեր հիվանդությունների բուժման ու կանխարգելման նպատակով գործածված բույսերի, ծառերի, ծաղիկների, արմատների, սերմերի, պտուղների անուններ, ինչպես նաև տարբեր կենդանիների ու թռչունների զանազան օրգանների անվանումներ: Այս բառարանում տեղ են գտել նաև Շբուժիչ հատկություններով «ժտոված» թանկարժեք քարերի, մետաղների, քիմիական նյութերի անվանումներ, լինչպես, օրինակ, ֆիրուզաշ-փիրուզաակն, ֆիլսիթ-ծծուււլ և այլն:

Բառարանը մեծ արժեք է ներկայացնում որպես իր ժամանակի բժշկական տեղմունքների հարուստ հավաքածու և համակարգված եռալեզվյան բառգիրք:

Մատենադարանում պահպանվել են նաև պարսկերեն-հայերեն առձեռն խոսակցական բառարաններ, որոնք կազմվել են մասնավոր անձանց կողմից դուռ գործնական նկատառումներով: Դրանց բառարանագրական արժեքը շատ ցածր է, բայց դրանք կարող են օգտագործվել լեզվի պատմության համար, մասնավորապես ժամանակի խոսակցական լեզվի բառաշերտն առանձնացնելու և բնութագրելու նպատակով: Մատենադարանի № 8281 ձեռագիր ժողովածուն պարունակում է պարսկերեն-հայերեն խոսակցական մի բառարան՝ ընդօրինակված 1642—1651 թթ. Ղրիմում, ում Գրիգոր երեցի կողմից: Այս բառգրքույկը հայատառ է: Այն ըստ երևույթին գրվել է առօրյա օգտագործման նպատակով: Հեղինակը հավանաբար չի իմացել պարսկերեն տառերը և միայն լսելով է սովորել պարսկերեն լեզուն: Այդ է պատճառը, թերևս, որ պարսկերեն բառերի արտասանությունը հաճախ սխալ է, աղավաղված: Բառգրքույկը բառարանագրական տեխնիկայի տեսակետից առանձին հետաքրքրություն չի ներկայացնում. գլխաբառերը չեն տրված նոր տողից, յուրաքանչյուր բառից հետո տրված է տվյալ բառի կամ բառակապակցության համարժեքը, որը հաջորդ գլխաբառից անջատված է կետով: Բացի բառերից և կայուն ու ոչ կայուն բառակապակցություններից բառգրքույկում տեղ են գտել նաև քառյականման շափածո հատվածներ, որոնք ամբողջությամբ թարգմանվում են: Սրանք, ըստ երևույթին, ժողովրդի մեջ շրջող, սերնդ-սերունդ սիրախանցվող երգեր և բանաստեղծություններ են: Այս հանգամանքը բարձրացնում է սույն բնագրի արժեքը, որքանով որ այն բանահյուսական որոշ նյութ է պարունակում: Բառգրքույկում ընդգրկված են գոյականներ, ածականներ, դերանուններ, բայեր և բազմաթիվ բառակապակցություններ ու արտահայտություններ: Շատ խճողված է բայական համակարգը. բայերը չեն տրվում անորոշ դերբայի ձևով, խոնարհված են: Ընդ որում տրված են հիմնականում բայի սահմանական եղանակի անկատար ներկա, վաղակատար ներկա, անցյալ կատարյալի (տալտալ-տվի) եզակի առաջին, երկրորդ և երրորդ դեմքի խոնարհված ձևերով: Շատ բայեր էլ դրված են հրամայական եղանակի ներկա ժամանակի եղակի երկրորդ դեմքով՝ պարխեգ-յաթի, աթաշ բխուն-կրակ

¹⁴ Մատենադարան, ձև. № 7944:

վառեր, իւամուշ պաշ-անխոս կեցի, պխուստ-պառկե, պիւնտաս-ի վար ձգէ, պղնու-ւսե: Այս հանգամանքը ևս գալիս է հաստատելու վերոհիշյալ ենթադրութիւնը, որ բառաբանութիւնը կազմվել է զուտ գործնական նկատարումներով, ամենօրյա գործածութեան համար, քանի որ օգտագործողի համար ավելի հեշտ է բառարանում գտնել ըստ դեմքի և թվի արդեն խոնարհված բայը, քան հնքնորոշն խոնարհել բառարանում տրված անորոշ դերբայի բայաձևը: Բառաբանութիւնը կան նաև ժխտական խոնարհման ենթարկված գլխաբաներ (փսիար մակու-շատ մի ասել, եայ մետեհեթ-չի տալ և այլն): Այս բառաբանութիւնները, ինչպիսիք են խօշ ամատի-բարի եկիր, բայ ջատի ի թու-եռ ողջութունիդ, եօշեռ պայ-ֆեզ անուշ և այլն: Ընդհանուր առմամբ այս բառաբանութիւնը պարունակում է 87 գլխաբան:

Համարյա նույն բովանդակութիւնն ունի նաև № 9398 ձեռագրում պահպանված բառաբանութիւնը:

Վերը բնութագրված պարսկերեն-հայերեն բառարանների ու բառարանատիպ երկնագլխի ընդհանուր կամ մասնագիտական փոքրածավալ բառացանկերի ներկա համառոտ քննութիւնը գալիս է հաստատելու այդ բնագավառում եղած շոշափելի ավանդների առկայութիւնը, ավանգներ, որոնք, նախորդած լինելով հետագայում կատարված աշխատանքներին, ինպես ընդհանուր բառարանագրական մշակույթի, այնպես էլ առավելապես պարսկահայկական բառարանագրութեան և լեզվական առնչութիւնների հետազոտման համար որոշակի գիտական հետաքրքրութիւն կարող են ներկայացնել:

НЕСКОЛЬКО МАЛЫХ ПАМЯТНИКОВ ПЕРСИДСКО-АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛЕКСИКОГРАФИИ

КАРИНЕ РУШАНЯН

Резюме

Персидско-армянская лексикография представлена значительным числом словарей, относящихся главным образом к XIII—XVIII вв. Среди них имеются весьма ценные в лексикографическом и лексикологическом отношении объемистые словари. Помимо того сохранилось довольно большое число малых персидско-армянских словарей, которые можно разбить на три группы: 1) словари отдельных литературных произведений, например, словарь персидских слов, использованных в «Истории Варданидов» Егише, и словарь, приложенный к персидскому переводу христианских религиозных текстов; 2) предметные (узкоспециальные) словари, в числе которых выделяются словари медицинских и фармакологических терминов, словарь-словник названий небесных тел и т. д.; 3) многочисленные словари-разговорники. Анализ малых словарей выявляет их несомненный интерес для истории языка, лексикографии, лексикологии. Вместе с тем из них можно почерпнуть определенный материал также по вопросу армяно-персидских культурных и социальных взаимоотношений.